ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԻ
WORTHY OF CARE

ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԻ

Լուսանկարների այս գրքույկը հրատարակվել է «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի «Տնային խնամք միայնակ ծերերին» ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է նպաստել Գյումրի, Վանաձոր և Գավառ քաղաքներում ապրող 300 միայնակ ծերերի կենսակերպի որակի բարձրացմանը: Ծրագրի շահառուները 70 տարեկանից բարձր միայնակ, անժառանգ տարեցներ են, չունեն իրենց հետ ապրող հարազատներ, չեն կարողանում ինքնուրույն հոգալ կենցաղային խնդիրները, հետևել անձնական հիգիենային, տան մաքրությանը, կերակուր պատրաստել և այլն:

Գրքույկի լուսանկարները շատերին մտածելու տեղիք կտան: Եթե յուրաքանչյուր ոք հոգատար վերաբերմունք ցուցաբերեր թեկուզ մեկ անօգնական տարեցի նկատմամբ, ապա այս գրքույկի անհրաժեշտությունը չէր լինի: Լուսանկարների տարեցներն անօգնական են, հասարակության ուշադրությունից հեռու: Նրանք երազում են հանգիստ ու խաղաղ կյանքի մասին:

WORTHY OF CARE

This brochure has been published by Armenian Caritas BNGO, in the framework of "Home Care for the Elderly" project. The aim of the project is to improve the life conditions of 300 elderly people living in Gavar, Gyumri and Vanadzor. The project beneficiaries are elderly people who are over 70 years old, live alone and have no relatives. They cannot solve household issues, take care of their personal hygiene, clean their homes or prepare their meal.

We hope these photos make many people stop and think. If each person demonstrates a caring attitude towards at least one helpless elderly person, then there would be no need for this brochure. The elderly people in these photos are helpless, deprived of societal care. They dream of a peaceful and comfortable life.

Բարերարներ՝ Կարիտաս Իսպանիա, Կարիտաս Ավստրիա, Կարիտաս Գերմանիա
Founded by: Caritas Spain, Caritas Austria, Caritas Germany

Սիրանդուխտ Բաղոյան
86 տարեկան, ք. Գավառ
Ապրում է մենակ: Ճակատագիրը նրան զրկել է ընտանիք ունենալու երջանկությունից:

Sirandukht Baghoyan
86 years old, Gavar
She lives alone deprived of the happiness of having her own family.



Սիրիկ Հակոբյան
78 տարեկան, ք. Գյումրի
Աչքերում թախիծ և սպասում...

Sirik Hakobyan
78 years old, Gyumri
There is sorrow and longing in her eyes...

Նորիկ Գրիգորյան
83 տարեկան, ք. Գավառ
Կենսախինդ և լավատես է՝ չնայած ճակատագիրը նրանից խլել է իր չորս զավակներին:

Norik Grigoryan
83 years old, Gavar
He's cheerful and optimistic, even though he lost all his four children and lives alone.

Համասփյուռ Նազարեթյան
83 տարեկան, ք. Գյումրի
Ցրտաշունչ ձմեռներն անցկացնում է հին երկաթյա տնակում:

Hamaspyur Nazaretyan
83 years old, Gyumri
She spends the long, severe winters in an iron container.

Սանդուխտ Ավագյան
81 տարեկան, ք. Գավառ
«Որպես Բաքվից մազապուրծ եղած փախստական՝ ես իմ հանգրվանը գտա Գավառում»:

Sandukht Avagyan
81 years old, Gavar
“As a refugee from Baku I found my shelter in Gavar”.

Օֆիկ Մաթևոսյան
82 տարեկան, ք. Գյումրի
Լենինյան շքանշանով պարգևատրված որպես աշխանանքային հերոս՝ այս կինը ապրում է խարխուլ հանրակացարանում: Երազում է վերականգնել քայլելու կարողությունը:

Ofik Matevosyan
82 years old, Gyumri
Once awarded the order of Lenin as a labor hero, this woman lives in a dilapidated dormitory. She dreams of regaining the ability of walking.

Մարուսյա Պողոսյան
86 տարեկան, ք. Գյումրի
Տեսողության կորուստը զրկել է նրան ապրելու ցանկությունից:

Marusya Poghosyan
86 years old, Gyumri
Blindness has deprived her of the will to live.

Ասյա Գործակալյան
76 տարեկան, ք. Գյումրի
Տիկին Ասյան ժառանգել է հոգսաշատ ծերություն:

Asya Gortsakalyan
76 years old, Gyumri
Mrs. Asya has inherited an old age full of troubles.

Արաքսյա Շառոյան
81 տարեկան, ք. Գավառ
«Կյանքում շատ դժվարություններ եմ հաղթահարել, սակայն միայնակ ծերությունը անհաղթահարելի տառապանք է»:

Araqsya Sharoyan
81 years old, Gavar
“I’ve overcome many difficulties in my life, but the loneliness is beyond me”.

Հեղուշ Դարբինյան
88 տարեկան, ք. Գյումրի
Իրականություն, որ չի կարելի պատկերել վառ գույներով...

Heghush Darbinyan
88 years old, Gyumri
A reality that cannot be described with bright colors...

Թամար Արղայան
77 տարեկան, ք. Գավառ
Ավանդական հայ կնոջ կերպարը ամփոփված է նրա համեստ կենսագրության մեջ:

Tamar Arghayan
77 years old, Gavar
The traditional image of an Armenian woman is summarized in her modest biography.

Մեսրոպ Մկրտչյան
82 տարեկան, ք. Վանաձոր
Համեստ ու լուռ այս պապիկին շատերն են ճանաչում: Չնայած իր առողջական խնդիրներին, խնամում է արդեն 6 տարի անկողնուն գամված կնոջը:

Mesrop Mkrtchyan
82 years old, Vanadzor
Everyone knows this modest and silent man. Despite of his own health problems, he takes care of his wife, who has been confined to bed for 6 years already.

Վազգեն Ներկարարյան
84 տարեկան, ք. Վանաձոր
Ապրում է կնոջ հետ, երեխաներ չունեն: Մոտ 80%-ով զրկված է տեսողությունից. դժվար է հաղորդակցվում, տեղաշարժվում:

Vazgen Nerkararyan
84 years old, Vanadzor
He lives with his wife. They don’t have children. He is 80% deprived of vision and has difficulties while communicating andmoving.

Ռոզա Խառատյան
83 տարեկան, Լոռի, գյուղ Գուգարք
Այս փոքրիկ տնակում ապրող տարեց կինն ամեն երեկո անց է կացնում մոմի լույսի տակ: Տնակում չկա էլեկտրաէներգիա, գազ և ջուր: Ապրում է մենակ, երեխաներ չունի:

Roza Kharatyan
83 years old, Lori village, Gugark
This old woman lives in this little container and spends her evenings under a candle light. There’s no electricity, gas or water supply in her container. She lives alone and doesn’t have children.

Արմենուհի Բադեյան
92 տարեկան, ք. Գավառ
Ապրում է մենակ իր հին տանը: «Ինչո՞ւ է Աստված խռովել ինձնից և զրկել երկնային կյանքից այսքան տարիներ»:

Armenuhi Badeyan
92 years old, Gavar
She lives alone in her dilapidated house. “Why did God turn his back to me and deprive me of the eternal life in heaven for so long?”.

Հոռոմսիմ Ուլիխանյան
84 տարեկան, ք. Վանաձոր
Սեփական բնակարանում տեղաշարժվելը մեծ խնդիր է այս կնոջ համար: Ապրում է մենակ, երեխաներ չունի:

Horomsim Ulikhanyan
84 years old, Vanadzor
Mobility in her own flat is a big problem for this woman. She lives alone and doesn’t have children.

Գեղեցիկ Պետրոսյան
78 տարեկան, ք. Վանաձոր
Ճակատագիրը նրան զրկել է երեխաներ ունենալու պարգևից: Աչքերում թախիծ է և հիասթափություն:

Geghecik Petrosyan
78 years old, Vanadzor
The fate deprived her of the gift of having children. There is sadness and disappointment in her eyes.

Օֆիկ Մարգարյան
84 տարեկան, ք. Գավառ
«Ամբողջ կյանքում աղոթել եմ առ Աստված գեթ մեկ զավակ ինձ պարգևելու համար»:

Ofik Margaryan
84 years old, Gavar
“I’ve prayed to God all my life to give me at least a child”.

Հասմիկ Աճիկյան
66 տարեկան, ք. Գյումրի
25 տարի ավտոտնակում ապրելուց հետո երազում է ունենալ նորմալ բնակարան:

Hasmik Atsikyan
66 years old, Gyumri
She dreams of having a normal apartment after 25 years of life in a garage.

Գառնիկ Մինասյան
81 տարեկան, ք. Գյումրի
«Տեսնես կգա՞ ժամանակ, երբ այս տան գորշ ու մռայլ պատերը կողողվեն ջերմությամբ»:

Minasyan Garnik
81 years old, Gyumri
“I wonder if there will be a time, when the grey and gloomy walls of this apartment are filled with warmth”.

Զարուհի Սարգսյան
81 տարեկան, ք. Գյումրի
Երազում է ձերբազատվել
միայնությունից:

Zaruhi Sargsyan
81 years old, Gyumri
She dreams of getting rid of loneliness.

«Հայկական Կարիտաս» ԲՀԿ
Armenian Caritas BNGO
www.caritasarm.am